ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՏԱՎՈՒՇԻ ՄԱՐԶՊԵՏ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

06 մայիսի 2011 թվականի թիվ 48- Ա

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՏԱՎՈՒՇԻ ՄԱՐԶՊԵՏԱՐԱՆԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՊԱՇՏՈՆՆԵՐԻ ԱՆՁՆԱԳՐԵՐՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <Իրավական ակտերի մասին> Հայաստանի Հանրապետության օրենքի 70-րդ հոդվածով, <Քաղաքացիական ծառայության մասին> Հայաստանի Հանրապետության օրենքի 9-րդ հոդվածի պահանջներով և հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության քաղաքացիական ծառայության խորհրդի 2011թ. ապրիլի 21-ի <Քաղաքացիական ծառայության պաշտոնների անձնագրերում փոփոխություններ և լրացումներ կատարելուն համաձայնություն տալու մասին> N 262- Ա որոշումը՝

ո ր ո շ ու մ եմ.

1.Հայաստանի Հանրապետության Տավուշի մարզպետարանի աշխատակազմի՝

1) ղեկավարի քաղաքացիական ծառայության պաշտոնի /ծածկագիր՝ 70-1.1-1/ անձնագրի՝

ա.11-րդ կետի <ե> ենթակետը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

<ե) Օրենքով սահմանված կարգով ապահովում է Աշխատակազմի քաղաքացիական ծառայության առաջատար թափուր պաշտոններ զբաղեցնելու համար անցկացվող մրցույթի, ինչպես նաև առաջատար և կրտսեր պաշտոններ զբաղեցնող քաղաքացիական ծառայողների ատեստավորման նախապատրաստական աշխատանքների իրականացումը.>,

բ.11-րդ կետի <է> ենթակետից հանել <և կրտսեր> բառերը,

գ. 11-րդ կետը <է> ենթակետից հետո լրացնել հետևյալ բովանդակությամբ նոր <է.1> և <է.2> ենթակետերով.

<է.1) Աշխատակազմի քաղաքացիական ծառայության կրտսեր թափուր պաշտոններ զբաղեցնելու համար դիմումներ ներկայացնելու վերջնաժամկետի ավարտից հետո՝ երեք աշխատանքային օրվա ընթացքում, դիմում ներկայացրած, գործող հավաստագիր ունեցող և տվյալ կրտսեր թափուր պաշտոնի անձնագրի պահանջները բավարարող քաղաքացիներից մեկին առանց մրցույթի նշանակում է քաղաքացիական ծառայության կրտսեր թափուր պաշտոնում.

է.2) Քաղաքացիական ծառայության կրտսեր թափուր պաշտոն զբաղեցնելու համար դիմած և չնշանակված քաղաքացիների ցանկը երեք աշխատանքային օրվա ընթացքում ներկայացնում է Խորհուրդ.>.

2) անձնակազմի կառավարման բաժնի վարիչի քաղաքացիական ծառայության պաշտոնի /ծածկագիր՝ 70-2.2-10/ անձնագրի՝

ա.11-րդ կետի <ե> ենթակետը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

<ե) քաղաքացիական ծառայության մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով իրականացնում է Աշխատակազմի առաջատար թափուր պաշտոններ զբաղեցնելու համար անցկացվող մրցույթի, ինչպես նաև Աշխատակազմի առաջատար և կրտսեր պաշտոններ զբաղեցնող քաղաքացիական ծառայողների ատեստավորման նախապատրաստական աշխատանքները.>,

բ.11-րդ կետը լրացնել հետևյալ բովանդակությամբ նոր <ե.1> ենթակետերով.

< ե.1) ապահովում է Աշխատակազմի քաղաքացիական ծառայության կրտսեր թափուր պաշտոն զբաղեցնելու համար գործող հավաստագիր ունեցող և տվյալ կրտսեր թափուր պաշտոնի անձնագրի պահանջները բավարարող քաղաքացիների կողմից ներկայացված դիմումների ընդունման,ինչպես նաև դիմած և չնշանակված քաղաքացիների ցանկն երեք աշխատանքային օրվա ընթացքում Խորհուրդ ներկայացնելու աշխատանքների իրականացումը.>.

3) անձնակազմի կառավարման բաժնի գլխավոր մասնագետի քաղաքացիական ծառայության պաշտոնի /ծածկագիր՝ 70-3.1-4/ անձնագրի՝

ա.11-րդ կետի <է> ենթակետը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

<է) քաղաքացիական ծառայության մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով մասնակցում է Աշխատակազմի առաջատար թափուր պաշտոններ զբաղեցնելու համար անցկացվող մրցույթի, ինչպես նաև Աշխատակազմի առաջատար և կրտսեր պաշտոններ զբաղեցնող քաղաքացիական ծառայողների ատեստավորման նախապատրաստական աշխատանքներին.>,

բ.11-րդ կետը լրացնել հետևյալ բովանդակությամբ նոր <է.1> ենթակետերով.

< է.1) իրականացնում է Աշխատակազմի քաղաքացիական ծառայության կրտսեր թափուր պաշտոն զբաղեցնելու համար գործող հավաստագիր ունեցող և տվյալ կրտսեր թափուր պաշտոնի անձնագրի պահանջները բավարարող քաղաքացիների կողմից ներկայացված դիմումների ընդունման,ինչպես նաև դիմած և չնշանակված քաղաքացիների ցանկն երեք աշխատանքային օրվա ընթացքում Հայաստանի Հանրապետության քաղաքացիական ծառայության խորհուրդ ներկայացնելու աշխատանքները.>.

գ.11-րդ կետի <թ> ենթակետը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

<թ) քաղաքացիական ծառայության մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով և ժամկետներում իրականացնում է Աշխատակազմի առաջատար թափուր պաշտոններ զբաղեցնելու համար անցկացվող մրցույթի, ինչպես նաև առաջատար և կրտսեր պաշտոններ զբաղեցնող քաղաքացիական ծառայողների ատեստավորման հարցաշարերի հրապարակման աշխատանքները.>,

4) անձնակազմի կառավարման բաժնի առաջատար մասնագետի քաղաքացիական ծառայության պաշտոնի /ծածկագիր՝ 70-3.3-6/ անձնագրի 11-րդ կետի՝

ա. <զ> ենթակետը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

<զ) քաղաքացիական ծառայության մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով մասնակցում է Աշխատակազմի առաջատար թափուր պաշտոններ զբաղեցնելու համար անցկացվող մրցույթի, ինչպես նաև Աշխատակազմի առաջատար և կրտսեր պաշտոններ զբաղեցնող քաղաքացիական ծառայողների ատեստավորման նախապատրաստական աշխատանքներին.>,

բ.11-րդ կետը լրացնել հետևյալ բովանդակությամբ նոր <զ.1> ենթակետերով.

< զ.1) մասնակցում է Աշխատակազմի քաղաքացիական ծառայության կրտսեր թափուր պաշտոն զբաղեցնելու համար գործող հավաստագիր ունեցող և տվյալ կրտսեր թափուր պաշտոնի անձնագրի պահանջները բավարարող քաղաքացիների կողմից ներկայացված դիմումների ընդունման,ինչպես նաև դիմած և չնշանակված քաղաքացիների ցանկն երեք աշխատանքային օրվա ընթացքում Հայաստանի Հանրապետության քաղաքացիական ծառայության խորհուրդ ներկայացնելու աշխատանքներին.>,

գ.11-րդ կետի <ը> ենթակետը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

<ը) իրականացնում է Աշխատակազմի առաջատար թափուր պաշտոններ զբաղեցնելու համար անցկացվող մրցույթի, ինչպես նաև առաջատար և կրտսեր պաշտոններ զբաղեցնող քաղաքացիական ծառայողների ատեստավորման ավարտից մեկ ժամ հետո տեսանելի ցուցանակի վրա մրցույթի և ատեստավորման արդյունքների գրավոր բողոքի առկայության կամ բացակայության մասին տեղեկության հրապարակման աշխատանքները.>:

2.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

Ա. ՂՈՒԼԱՐՅԱՆ

2011թ. մայիսի 06
ք.Իջևան